ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՍԵՓԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺՎԵԼ Է

19.04.2016 10:41

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 15.04.2016թ. թիվ 119-Ա որոշմամբ փաստաբան Թամարա Յայլոյանի դիմումի հիման վրա փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի (արտոնագիր թիվ 999) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:

23.03.2016թ. փաստաբան Թամարա Յայլոյանը դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ հայտնել է, որ 22.03.2016թ. www.youtube.com կայքում տեղադրված **տեսանյութում** ցուցադրված է դատավարությունից հատված, որի 39.17 րոպեից մինչև 39.46 րոպեն ընկած ժամանակահատվածում տեսաձայնագրված է փաստաբան Լուսինե Սահակյանի և տվյալ գործով մեղադրողի խոսակցությունը, որի ընթացքում մեղադրողը վիրավորական արտահայտություններ է կատարել Թամարա Յայլոյանի հասցեին, իսկ փաստաբան Լուսինե Սահակյանը չի միջամտել և սաստել մեղադրողին:

Հիշեցնում ենք, որ հիմք ընդունելով Թամարա Յայլոյանի դիմումը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին խնդրելով քննության առնել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ՇԴ/0072/01/15 քրեական գործով մեղադրող Գևորգ Գևորգյանի վերոնշյալ վարքագիծը:

Բեռնել ՓՊ նախագահի որոշումը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })